ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 9 դեկտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Վաղարշյանի

Անդամակցությամբ՝ Հ. Հովակիմյանի

Վ. Գրիգորյանի

Քննության առնելով «ԳԻՆԱՓ» ՍՊԸ անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. «ԳԻՆԱՓ» ՍՊԸ դիմումը (ներկայացուցիչ՝ փաստաբան Լուսինե Գրիգորյան, այսուհետ՝ Դիմող) Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2024 թվականի նոյեմբերի 25-ին, որով Դիմողը խնդրել է.

«Թիվ ՎԴ/6725/05/20 վարչական գործով 16.10.2023 թ. կայացված վերջնական դատական ակտով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի՝ ՀՀ կառավարության 2015

թվականի սեպտեմբերի 17-ի [«Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքերի և /կամ/ նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքերից ազատելու արտոնության կիրառման կարգը հաստատելու և լիազոր մարմին ճանաչելու մասին»] թիվ 1118-Ն որոշման [մինչև 24.04.2021 թվականը գործող խմբագրությամբ] *հավելվածով հաստատված կարգի 5-րդ կետին տրված մեկնաբանությունը ճանաչել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասին, 39-րդ հոդվածին, 60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 8-րդ մասերին և 79-րդ հոդվածին հակասող և անվավեր, այնքանով որքանով Որոշմամբ հաստատված Կարգի խնդրո առարկա կետը որոշակի և հստակ չէ, չի համապատասխանում իրավական որոշակիության կանոններին, որպեսզի անձը հնարավորություն ունենար իր վարքագիծը համապատասխանացնել օրենքի պահանջներին և դրսևորել համապատասխան վարքագիծ»:*

2. Ներկայացնելով թիվ ՎԴ/6725/05/20 վարչական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը նշում է, որ վերաքննիչ վարչական դատարանի կողմից կայացված դատական ակտից պարզ չէ, թե տվյալ դատարանն ինչպե՞ս է նշված նորմերից բխեցրել անձի կողմից որոշակի պարտականության կամ օրենսդրությամբ չնախատեսված որոշակի պայմանի առկայություն այն պարագայում, երբ նման պարտականությունը կամ պայմանն ուղղակիորեն սահմանված չէ նշված նորմերում:

Միաժամանակ, Դիմողը, անդրադառնալով վերաքննիչ վարչական դատարանի կողմից արտահայտած այն դիրքորոշմանը, թե *«(...) Այլ կերպ ասած՝ գերակա ոլորտում ներդրումային ծրագրի շրջանակներում տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և նյութերի ներմուծումը չպետք է հետապնդի եկամուտ ստանալու նպատակ՝ անմիջական իրացման տեսքով, այլ այն պետք է անհրաժեշտ լինի ներդրումային ծրագրի շրջանակներում արտադրանքի ստացման համար»*, գտնում է, որ նման մեկնաբանության պայմաններում ակնհայտ է, որ խախտվում է ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, որի համաձայն՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

Ըստ Դիմողի՝ *«(...) օրենքի հիման վրա սեփականության իրավունքի սահմանափակման մասին խոսք գնալ չի կարող, եթե տվյալ օրենքը չի համապատասխանում իրավական որոշակիության կանոններին, անձը հնարավորություն չի ունենում իր վարքագիծը համապատասխանեցնել օրենքի պահանջներին*»:

Դիմողը նշում է, որ *«(...) անձինք ազատ են տիրապետելու սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքը: Միաժամանակ ՀՀ Սահմանադրության մակարդակով սահմանված է հարկ վճարելու պարտավորությունը: Սա նշանակում է, որ հարկի նկատմամբ անձանց սեփականության իրավունքն իրավաչափորեն սահմանափակված է, դա վերջիններիս պարտականությունն է պետության հանդեպ, ինչն անառարկելիորեն բխում է հանրային շահից: Հենց վերոգրյալի հաշվառմամբ՝ սահմանվել է բացառապես օրենքի հիման վրա սեփականության իրավունքի սահմանափակման սկզբունքը և բացառապես օրենքի հիման վրա հարկերի սահմանման սկզբունքը*»:

Դիմողի պնդմամբ՝ Սահմանադրությամբ ուղղակիորեն մատնանշված է, թե որ սահմանափակումը պետք է նախատեսված լինի բացառապես օրենքով, սույն պարագայում արդեն իսկ սեփականության իրավունքին օրենքով չնախատեսված միջամտությունն առկա է, ուստի՝ ստացվում է, որ իրավաբանական անձն ազատ է տնօրինելու իր սեփականությունը՝ միևնույն ժամանակ ունենալով հարկերի և վճարների վճարում կատարելու պարտավորություն:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքներից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված* ***նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,*** *ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների*

խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում: Հիշյալ դրույթը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված ***նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը****, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում* ***առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:***

2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «*(…) բոլոր այն դեպքերում, երբ դիմողը,* ***ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության, բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (…) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:***

Սահմանադրական դատարանի դատական կազմը հարկ է համարում ընդգծել, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են **ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի տվյալ**

գործով կիրառման կամ չկիրառման, այլ նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի (դրույթների) սահմանադրականության գնահատման հարցեր:

Քննարկվող համատեքստում, հաշվի առնելով Դիմողի ներկայացրած դիրքորոշումները և հիմնավորումները՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ վերջինիս կողմից բարձրացվել է այնպիսի հարց, որը **ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ սույն անհատական դիմումով Դիմողը, ձևականորեն վիճարկելով Կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1118-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 5-րդ կետի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) սահմանադրականությունը, **ըստ էության, բարձրացնում է տվյալ դրույթի կիրառման իրավաչափության հարց**:

Մասնավորապես, Դիմողն իր անհատական դիմումով ներկայացրել է դիրքորոշում առ այն, որ *«(...) ՀՀ վերաքննիչ վարչական դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Ընկերությունն իսկապես պահպանել է արտոնությունների տրամադրման պայմանները, մասնավորապես՝ ներմուծված ապրանքներն օգտագործել է ՀՀ տարածքում, որևէ իրավական ակտով սահմանափակված չեն եղել ներմուծվող ապրանքների նկատմամբ ընկերության գույքային իրավունքները ՀՀ տարածքում»:*

Դիմողը վկայակոչել է նաև հետևյալ բովանդակությամբ դիրքորոշում.

«ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատական ակտից պարզ չէ, թե Վերաքննիչ դատարանն ինչպես է նշված նորմերից բխեցրել անձի կողմից որոշակի պարտականության կամ օրենսդրությամբ չնախատեսված որոշակի պայմանի առկայություն, այն պարագայում, երբ նման պարտականությունը կամ պայմանն ուղղակիորեն սահմանված չէ նշված նորմերում»:

Սահմանադրական դատարանի դատական կազմը վերոգրյալի հաշվառմամբ եզրակացնում է, որ սույն անհատական դիմումով Դիմողը վիճարկվող դրույթի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) **հակասահմանադրականության որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացնում,** իսկ որպես փաստարկ ներկայացվող դիրքորոշումներն առավելապես վերաբերում են թիվ ՎԴ/6725/05/20 վարչական գործով **դատարանների գործողությունների (կայացրած դատական**

ակտերի) իրավաչափությանը:

Դիմողի բարձրացրած հարցի ըստ էության քննությունը ենթադրում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե վիճարկվող դրույթի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) սահմանադրականության գնահատում, այլ դատարանների գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափության ստուգում, ինչը **դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից,** ուստի՝ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման՝ դիմումում առաջադրված հարցի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

«ԳԻՆԱՓ» ՍՊԸ անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝ Ա. Վաղարշյան

Անդամներ՝ Հ. Հովակիմյան

Վ. Գրիգորյան

9 դեկտեմբերի 2024 թվականի
ՍԴԴԿՈ-64